«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջ

Հաստատված է
Տնօրինական խորհրդի կողմից
« 29 » 08 2019թ.
Արձանագրություն № 1

Հաստատում եմ
«Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի
Տնօրեն՝ Ի. Վարդանյան
«02» 09 2019թ.

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2019

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում է «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողների առարկայական պարտքերի մարման համակարգը:

1.2. Սույն կարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին» և «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասն» ՀՀ օրենքները, «Գրիգորիս» բժշկա-հումանիտար քոլեջի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1. 1-4 «չներկայացած», «չթույլատրված», «չգնահատված», «չստուգված» և ամբավարար միավորներով փակված առարկաները և մոդուլները համարվում են առարկայական պարտքեր:

2.2. 1-4 առարկայական պարտքեր ունեցող ուսանողները թույլատրվում են մասնակցել առարկայական պարտքերի մարման գործընթացին, իսկ 5 և ավելի առարկայական պարտք ունեցող ուսանողները ազատվում են ուսանողական իրավունքից (հեռացում)՝ որպես միջանկյալ ատեստավորում չանցած ուսանողներ:

2.3. Ոչ քննական առարկաների կամ մոդուլների տարբերակված ստուգարքների և քննական առարկաների կամ մոդուլների գնահատականները հավասարազոր են և, որպես հանրագումարային, կիսամյակների վերջում դասամատյանից կամ քննական տեղեկագրից տեղափոխվում են ուսումնական խմբի ակադեմիական առաջադիմության ամփոփագիր:

2.4. Այն ուսանողները, որոնք անցել են առաջին կիսամյակի միջանկյալ ատեստավորումը շարունակում են իրենց ուսումը 2-րդ կիսամյակաում:

2.5. 2-րդ կիսամյակի միջանկյալ ատեստավորումը անցած ուսանողները փոխադրվում են հաջորդ կուրս, իսկ նրանք ովքեր ունեն առարկայական պարտքեր՝ համարվում են պայամանական ուսումնառողներ կամ պայմանական փոխադրվածներ: Նրանք առարկայական պարտքերը հանձնում են սեպտեմբերի 5-10-ը մինչև հոկտեմբերի 5 -10 ը, իսկ 2-րդ կիսամյակի առարկայական պարտքերը՝ փետրվարի 10-ից մարտի 10-ը ընկած ժամանակահատվածում:

2.6. Չհանձնելու դեպքում անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով հեռացվում է քոլեջից:

2.7. Առարկայական պարտքերի ժամկետը սահմանվում է մանկավարժական խորհրդի համապատասխան նիստում (օգոստոսի 29-31-ը և հունվարի 15-18):

3. ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

3.1. Գործընթացը կազմակերպում է առարկայական պարտքերի մարման հանձնաժողովը, որը նաև ընդունում է առարկայական պարտքերը համապատասխան հստակ սահմանված ժամանակացույցով:

3.2. Առարկայական պարտքերի հանձնաժողովը կազմվում է տնօրինական խորհրդի առաջին նիստում, գործում է հետևյալ կազմով.

- **Նախագահ** - Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ:
- **Անդամներ** - Ուսումնական մասի վարիչ, պրակտիկայի ղեկավար, համապատասխան ամբիոնի վարիչներ և 2 մասնագետ դասախոսներ:

3.3. Սեպտեմբերի 1-5-ը և հունվարի 19-28-ը ուսումնական մասի վարիչը պատրաստում է առարկայական պարտքերի ուղեգրերը և տրամադրում առարկայական պարտք ունեցող ուսանողին:

3.4. ՈՒսանողները իրավունք ունեն մեկ ամսվա ընթացքում հանձնել առարկայական պարտքը:

3.5. Առարկայական պարտքերի արդյունքները քննարկվում են տնօրինական խորհուրդի համապատասխան նիստում և հրամանագրվում /ԸԳ հրամանագրքում/: